Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Կատարողական վարույթը կասեցնելու մասին

«23» մայիսի 2022թ. ք.Կապան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի Կապան-Մեղրի տարածաշրջանային բաժանմունքի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Ասլան Գարաքյանս, ուսումնասիրելով «13» մայիսի 2022թ. հարուցված թիվ 09079025, «19» մայիսի 2022թ. հարուցված թիվ 09102260 կատարողական վարույթների նյութերը.

Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «06» մայիս 2022թ. տրված թիվ ՍԴ/0202/02/21 կատարողական թերթի համաձայն պետք է Արման Արսենի Օհանջանյան-ից, Նարեկ Կիմի Բաբայանից և Արուս Խորենի Բակունցից համապարտությամբ «Ակբա բանկ» ԲԲԸ-ի օգտին բռնագանձել 2962902 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան-ի կողմից «11» մայիս 2022թ. տրված թիվ ԵԴ/3228/17/22 կատարողական թերթի համաձայն պետք է Արման Արսենի Օհանջանյան-ից «Գլոբալ կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի օգտին բռնագանձել 633295 ՀՀ դրամ և հաշվեգրվող տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարզվեց, որ պարտապան Արման Արսենի Օհանջանյանին պատկանող գույքը բավարար չէ պահանջատիրոջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1-րդ հոդվածներով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Կասեցնել «13» մայիսի 2022թ. հարուցված թիվ 09079025, «19» մայիսի 2022թ. հարուցված թիվ 09102260 կատարողական վարույթները 90-օրյա ժամկետով.

Առաջարկել պահանջատիրոջը և պարտապաններին նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան.

Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում.

Որոշման պատճենն ուղարկել կողմերին.

Հարկադիր կատարողի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել վերադասության կարգով որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հետո՝ երկամսյա ժամկետում, կամ վարչական դատարան՝ օրենքով սահմանված ժամկետներում:

Ավագ հարկադիր կատարող՝ Ա. Գարաքյան

Digitally signed by
GARAKYAN ASLAN
4004770084
Date: 2022.05.23
17:20:15 AMT